Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 61-Ն, 62-Ն, 63-Ա-65-Ա, 66-Ն ԵՎ 70-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 61-Ն որոշման դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 62-Ն որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասին, համաձայն որի՝ նոր փոփոխությունները կամ լրացումները կատարվում են միայն հիմնական ակտում: Այսինքն, որոշմամբ փոփոխությունը պետք է կատարվեր հիմնական ակտում՝ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 60-Ն որոշման մեջ:

Թիվ 63-Ա որոշման 1-ին կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասին, համաձայն որի՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում:

Թիվ 64-Ա որոշման 3-րդ կետը չի համապատասխանում որոշման վերնագիրին:

Որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով «Համայնքի ղեկավարի տեղակալ» պաշտոնները համարվում են համայնքային քաղաքական պաշտոններ (հիմք՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս):

Թիվ 65-Ա որոշման 3-րդ կետը չի համապատասխանում որոշման վերնագրին:

Որոշմամբ հաստատված հավելվածում «Արթիկի թիվ 1 մանկապարտեզ» (3 խմբի համար), «Արթիկի թիվ 2 մանկապարտեզ» (4 խմբի համար), «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» (4 խմբի համար) և «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» (3 խմբի համար) ՀՈԱԿ-ներում «Բուժքույրի» հաստիքային միավոր է սահմանված 1 դրույքը, սակայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» թիվ 29-Ն հրամանով այն նախատեսված է 0.75 դրույք, «Հաշվապահի» հաստիքային միավոր է սահմանված 1 դրույք, սակայն վերոնշյալ հրամանով այն նախատեսված է 0.5 դրույք, «Արթիկի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում (3 խմբի համար) «Տնտեսվարի» համար սահմանված է 0.75 դրույք, սակայն նախատեսված է 0.5 դրույք, «Արթիկի թիվ 2 մանկապարտեզ» և «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներում (4 խմբի համար) «Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալի» և «Երաժշտության դաստիարակի» համար հաստիքային միավորներ են սահմանված 0.75 դրույքը, սակայն նախատեսված է 1 դրույք, իսկ «Տնտեսվարի» հաստիքային միավորների համար սահմանված է 1 դրույք, սակայն նախատեսված է 0.5 դրույք, «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում (3 խմբի համար) «Խոհարարի օգնականի» համար սահմանված է 0.75 դրույք, սակայն նախատեսված է 0.5 դրույք:

Թիվ 66-Ն որոշման նախաբանում հղումը «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներին ավելորդ է:

Որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում «9)»-րդ ենթակետի «բ» պարբերության «26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում» և «100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում» տողերի «7800

(100400x0.75)» և «15300 (200400x0.75)» թվերը համապատասխանաբար փոխարինել «7800 (10400x0.75)» և «15300 (20400x0.75)» թվերով:

Որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածում նշված «2020» թիվը փոխարինել «2021» թվով: Բացի այդ, 1-ին կետի 7-րդ ենթակետով սահմանված աղբահանության վճարի դրույքաչափերը անհրաժեշտ է համապատասխանեցնել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված աղբահանության տեսակներին և վճարի դրույքաչափերին:

Որոշմամբ հաստատված հավելվածների դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 70-Ա որոշումն ընդունվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի խախտմամբ, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումը համայնքի ավագանուն և մարզպետին պետք է ներկայացնի եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: Սակայն որոշումն ընդունվել է 2020 թվականի դեկտեմբերի 8-ին և ներկայացվել դեկտեմբերի 17-ին:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
13.01.2021թ.